ՀՏԴ՝ 631.67(479.25)(091)
DOI: 10.54503/0135-0536-2026.1-229

ՈՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Վ. Լենին, Ֆ. Նանսեն, ոռոգում, «վիշապ» կոթողներ, խորհրդային գաղափարախոսություն, սոցիալիստական ռեալիզմ, հնագիտական հետազոտություններ:

Ամփոփում

1921 թ. Կովկասի կոմունիստներին ուղղված ՌԽՖՍՀ ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինի նամակում ձևակերպվում է ոռոգման կարևորության մասին գաղափարը, ինչը դառնում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ առանցքային ելակետ:

Նորվեգացի բևեռախույզ և հասարակական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենի 1925 թ. մարդասիրական առաքելությունը Հայաստանում ուղղակիորեն կապվում է ոռոգման ծրագրերի հետ ու միջազգային մակարդակում հիմնավորում է լենինյան գաղափարների արդիականությունը: Նույն ժամանակաշրջանում ակտիվանում են հնագույն ոռոգման համակարգերին և դրանց առնչվող «վիշապ» կոթողներին վերաբերող հնագիտական հետազոտությունները, ինչի արդյունքում ձևավորվում է գիտական խոսույթ (նարատիվ) առ այն, որ ոռոգումը հնագույն ժամանակներում նպաստել է պետականության առաջացմանը: Սոցիալիստական ռեալիզմի շրջանակներում Լենինի կերպարը առասպելականացվում էր՝ ստանալով «ջուր բացող հերոսի» հատկանիշներ, ինչը ծառայում էր քարոզչական նպատակների: Այսպիսով՝ ոռոգման ծրագրերը ներկայացվում են ոչ միայն որպես տնտեսական անհրաժեշտություն, այլև որպես խորհրդային և մասնավորապես խորհրդահայ նոր պետականության կայացման խորհրդանիշ:

Նախաբան

1920-ական թվականներին Խորհրդային Հայաստանը վերապրեց սոցիալ-քաղաքական ու մշակութային արմատական փոփոխություններ, որոնք ուղեկցվում էին տնտեսական և, մասնավորապես, ոռոգման մեծածավալ ծրագրերով:

---

* Ներկայացվել է 08. I. 2026 թ.: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Բոբոխյանը (10. I. 2026 թ.): Ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Ոռոգման կարևորության մասին Վ. Լենինի մտքերը Կովկասում դարձան ոչ միայն տնտեսական զարգացման առանցք, այլև գաղափարական հենք, որի վրա կառուցվեց խորհրդային իշխանության նոր նարատիվը: Այս ուղղությամբ կարևոր դեր խաղաց Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական առաքելությունը, որի արդյունքում Հայաստանի վերածննդի գաղափարը ներկայացվեց միջազգային հարթակում, իսկ դրա առանցքային կետը ոռոգումն էր:

Նշված գործընթացները զուգորդվեցին հնագիտական ուսումնասիրություններով, որոնց միջոցով ձևավորվեց մի տեսակետ, ըստ որի՝ ոռոգման համակարգերը հնուց ի վեր էական դեր են խաղացել պետականության ստեղծման և զարգացման գործում:

Վ. Լենինի նամակը Կովկասի կոմունիստներին

Վ. Լենինը 1921 թ. ապրիլի 24-ին նամակ է ուղղում Կովկասի կոմունիստներին, որը տեղ է հասցնում Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը: Այն առաջին անգամ տպագրվում է «Պրավդա Գրուզիի» թերթի մայիսի 8-ի համարում: Նամակում Լենինը մասնավորապես նշում է, որ Կովկասն ունի բազմաթիվ բնական պաշարներ, ինչը կարող է հնարավորություն տալ տարածաշրջանի տնտեսական առաջընթացի համար: Տեքստի միջնամասում և հատկապես վերջում երեք անգամ հատուկ շեշտում է այդ հարցում ոռոգման կարևորությունը. «Ոռոգումը հատկապես կարևոր է, որպեսզի վերականգնվի երկրագործությունն ու անասնապահությունը, ինչ գնով էլ որ լինի ... Անհրաժեշտ է սկսել էլեկտրաֆիկացիայի և ոռոգման մեծ աշխատանքներ ... Ոռոգումն ամենապետքականն է, այն կվերստեղծի, կվերածնի տարածաշրջանը, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]: Ստորև փորձելու ենք ցույց տալ այս մտքի գաղափարական և իրական ազդեցությունը հայ իրականության վրա:

Նանսենի առաքելությունը

1925 թ. Թիֆլիսում գտնվելու ընթացքում Լենինի վերոհիշյալ նամակով հետաքրքրվում է մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենը, ով ձեռք է բերում այդ «հիանալի փաստաթղթի պատճենը»՝ գիտակցելով, որ իր առաքելության նպատակը սերտորեն առնչվում է առաջնորդի նամակում քննարկվող խնդիրներին[2]:

Իսկ ո՞րն էր Նանսենի առաքելությունը Կովկասում: Նանսենը, ի թիվս այլոց, զբաղվում էր 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ ցրված հայ գաղթականների՝ Խորհրդային Հայաստան տեղափոխման խնդրով՝ փորձելով նպաստել երկրի խոպան հողերի յուրացմանը՝ ոռոգման ու ճահիճների չորացման միջոցով: Ազգերի լիգան նրա գլխավորությամբ կազմում է հատուկ հանձնաժողով, որը Հայաստանում պետք է ուսումնասիրեր այդ

---

[1] Ленин. 1950, 296–297; հմմտ. Арутюнян, Оганесян. 1955, 12; Агаханян. 1957, 233; Շիրմազան, Դարբինյան. 1961, 49, Գասպարյան. 1968, 190, նաև՝ Киквидзе. 1964, 3; Առաքելյան. 1987, 8:

[2] Вержбицкий. 1961, 237; Вержбицкий. 1978, 240; Արզումանյան. 1977, 146:

հարցը՝ քննարկման ներկայացնելով համապատասխան եզրակացություններ: Նանսենը գյուղատնտես ու ջրաշինարար մասնագետների ուղեկցությամբ շուտով մեկնում է Հայաստան: Անցնելով Պոլիս–Բաթում–Թիֆլիս ճանապարհով՝ 1925 թ. հունիսի 17-ին նա հասնում է Երևան: Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ այցելում է անջրդի գոտիներ, քննարկում հնարավոր ոռոգման ու գաղթականներին այդ տարածքներում բնակեցնելու խնդիրները և այդ ամենն իրականացնելու մեխանիզմները: Հուլիսի 2-ին մեծ հայասերը Երևանից մեկնում է Մոսկվա՝ տանելով Հայաստանի մասին իր պատկերացումը, ըստ որի՝ երկիրը դրախտ դառնալու համար կարիք ունի միայն մեկ բանի՝ ջրի: Հայաստան այցելության ընթացքում Նանսենը ոչ միայն ծանոթանում է երկրի խնդիրներին, այլև ուսումնասիրում հայ ժողովրդի պատմությունը՝ այցելում հնագիտական հուշարձաններ, թանգարաններ, Երևանի պետական համալսարան: Այս ամենի արդյունքում նա գրում է «Խաբված ժողովուրդ» (1928 թ.) գիրքը, որն ընթերցողին էր ներկայացնում Հայաստանն իր ներկայով ու անցյալով և պատասխան էր տալիս այն հարցին, թե ինչու արևմտյան տերությունները մերժեցին իր մեծ ծրագրերը[3]:

Լենինը բարձր էր գնահատում Նոբելյան մրցանակի մեծ մասը Խորհրդային Միությունում գյուղատնտեսական կայանների կառուցմանը նվիրաբերած Ֆ. Նանսենին: Պատահական չէ, որ վերջինիս միջնորդությամբ Նանսենն ընտրվում է Մոսկվայի խորհրդի պատվավոր անդամ ու պարգևատրվում Խորհուրդների համառուսաստանյան IX համագումարի պատվոգրով[4]:

Ոռոգման մասին պատմական նարատիվի ստեղծումը

Լենինյան սկզբունքով մեծ ջրաշինարարական ծրագրերի (Այղրը լճի ջրամբար, Շիրակի և Սարդարապատի ջրանցքներ) իրականացման ժամանակաշրջանը համընկավ հնագույն Հայաստանի ուշագրավ երևույթ համարվող ջրաբաշխական համակարգերի և դրանց առնչվող «վիշապ» կոթողների հետազոտության հիմնական շրջանին (1924–1927 թթ.):

Հայկական լեռնաշխարհին բնորոշ այդ կոթողների ուսումնասիրությունը սկսվեց XX դարի սկզբին ու շարունակվում է մինչ օրս[5]: Քանի որ այդ հուշարձանները գտնվում են բարձր լեռնային գոտիներում, լճակների և հոսող ջրի ակունքների մոտ, իսկ դրանց մի տեսակն էլ ձուկ է պատկերում, ուստի առաջին հետազոտողները առնչություն նկատեցին այդ կոթողների, ջրի հնագույն պաշտամունքի և ջրօգտագործման միջև: 1920-ական թվականներին Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն և, մասնավորապես, դրա գիտական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարը այս երևույթը հետազոտելու

[3] Ն ա ն ս ե ն. 2000, հմմտ. նաև Շ ի ր մ ա զ ա ն. 1963, Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. 1974, Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. 1977:

[4] Ա ր զ ո ւ մ ա ն յ ա ն. 1974, 42:

[5] М а р р, С м и р н о в. 1931; П и о т р о в с к и й. 1939; Ա բ ե ղ յ ա ն. 1941, К а п а н ц я н. 1952; Պ ե տ ր ո ս յ ա ն, Բ ո բ ո խ յ ա ն. 2015, G i l i b e r t et al. 2012; H n i l a et al. 2019; B o b o k h y a n et al. 2024.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1

նպատակով հատուկ ծրագիր իրագործեցին՝ «Ջրի կուլտը հին Հայաստանում և «վիշապների» պրոբլեմը» վերնագրով[6]:

Այս ծրագիրը հիմնականում փորձարկվեց Արագած լեռան վրա ու Գեղամա լեռներում, ինչի արդյունքում զարգացվեց տեսակետ, ըստ որի՝ նախապատմական շրջանին վերաբերող «վիշապ» կոթողները գտնվել են Արարատյան դաշտը ջրով ապահովող ջրաբաշխական համակարգերի կարևոր կետերում և ուղղակիորեն կապված են դրանց հետ՝ որպես ջրի պաշտամունքի խորհրդանիշ, ջրի պահապան, ջրանցքաշինության հովանավոր: Իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ ջրաբաշխական համակարգերը արհեստական լճակների ու ջրանցքների բարդ կառուցվածքներ են, որոնք տարածվում են լեռների լանջերին ու ստորոտներին՝ նպատակ ունենալով զարգացնել դաշտավայրային գոտիների երկրագործությունը և այգեգործությունը, ինչպես նաև անասնապահությունը: Այդ նպատակով օգտագործվել են ձյան ու անձրևի ջրերը, որոնք լեռներից վար են հոսել գարնանը: Արագածյան հնագույն ոռոգման ցանցում, ըստ տեղադրության առանձնահատկությունների, եղել են երկու տիպի ջրամբար-լճակներ՝ 1. ջրահավաք լճակներ (որոնք գտնվել են ցանցի վերին մասում և ամբարել ձնհալի ջրերը՝ սնուցելով դրանցից սկիզբ առնող ջրանցքները), և 2. ջրանցքների ուղղությամբ դասավորված ու արհեստական պատվարներով բնորոշվող լճակ-ջրամբարներ: Վերջիններս կարելի է սահմանել որպես գլխավոր ջրանցքներ (որոնք սկիզբ են առնում ջրհավաք լճերից) և գլխավոր առուներից կամ ավելի ցածր գոտում գտնվող լճակներից սկսվող ջրատարներ (որոնք ջրաբաշխական առուներ են ու օգտագործվում են առանձին տարածքներ ոռոգելու նպատակով): «Վիշապ» կոթողները գտնվել են հենց այս ոռոգման համակարգերի հանգուցակետերում[7]:

Հիշյալ վարկածը գերիշխող դարձավ հետագա հետազոտողների շրջանում[8]: Իր վերոհիշյալ գրքում այս վարկածին է անդրադառնում նաև Նանսենը՝ այդ մասին տեղեկություններ ստանալով Ա. Քալանթարից, որին նա հղում և շնորհակալություն է հայտնում իր գրքում[9]: Այստեղ Նանսենը շեշտում է նաև, որ Հայաստանի հնագույն բնակիչներն ունեին «զարգացած ոռոգման համակարգ և ջրի պաշտամունքի տարածման շրջանում յուրովի երկրպագում էին «վիշապին»՝ ձկնակերպ հսկային, որ համարվում էր ջրի աստվածություն»[10]:

---

[6] Քալանթար. 1931, 9, 13, Քալանթար. 1933, Քալանթար. 1937, 171–194, հմմտ. Թամանյան. 1988, 10–16, Brentjes. 1973, 20.

[7] Քալանթար. 1937, Շիրմազան. 1962, 50–55:

[8] Марр, Смирнов. 1931, 80–81; Տեր-Մովսիսյան. 1936, 13, Пиотровский. 1949, 76; Աղախանյան. 1960, 19–20, Շիրմազան. 1962, 7, 50, 53, 106–107, Խաչատրյան. 1971, 128, 136, Burney, Lang. 1971, 214, 220; Хачатрян. 1976, 121; Santrot. 1996, 74; Kushnareva. 1997, 187; Nalbandyan. 2016, 305–306.

[9] Նանսեն. 2000, 189–192, հմմտ. Արզումանյան. 1977, 269–271:

[10] Նանսեն. 2000, 189–190. տեքստը գրելիս, բացի Քալանթարի կողմից տրամադրված գրավոր հաղորդումներից, Նանսենի համար կարևոր սկզբնաղբյուր է եղել Ա. Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» հոդվածը (Քալանթար. 1925),

Այսուհանդերձ, կարծում ենք, որ ոռոգման համակարգի և դրա համատեքստում վիշապների հետազոտման աշխուժությունը 1920-ական թվականներին ուներ գաղափարական որոշակի հենք և, հավանաբար, պարունակում էր պետպատվերի որոշակի տարրեր: Ելնելով Վ. Լենինի 1921 թ. Կովկասի կոմունիստներին ուղղված վերոհիշյալ նամակում արտահայտված այն մտքից, թե ոռոգումն ամենից կարևորն է և կվերածնի երկիրը, հայ իրականության մեջ սկսեցին մեծ ուշադրություն դարձել ոռոգման խնդրին: Այս կապակցությամբ իրականացվեցին ոչ միայն լայնածավալ ջրատնտեսական աշխատանքներ, այլև այդ աշխատանքները գաղափարապես հիմնավորող գիտական հետազոտություններ, որոնք ուղղված էին հնագույն Հայաստանի ջրատնտեսության ու ջրի հետ կապված պաշտամունքի ուսումնասիրությանն ու համապատասխան նարատիվի կերտմանը:

Առաջին հայացքից այս նարատիվի գերխնդիրը ոռոգման պատմական կարևորության շեշտումն էր տևականության մեջ՝ նախնիներից սկսած: Այս տեսակետի տարածողն ու հասարակությանը միջնորդողը մտավորականներն էին, որոնք մի կողմից՝ հետազոտության, մյուս կողմից՝ նաև հասարակական գործունեության միջոցով տրամադրություններ պետք է ստեղծեին: Այսպես՝ Այղրը լճի ջրամբարի 1925–1927 թվականների շինարարության կապակցությամբ հայտնի պետական գործիչ և պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը մի գրառման մեջ նշում է քարեդարյան ու բրոնզեդարյան հուշարձաններ (կրոմլեխներ, մեգալիթներ, դոլմեններ և այլն), այդ թվում՝ ոռոգման հնագույն հետքեր, որոնք խոսում են ջրաշինարարության վաղ ակունքների մասին[11]: Ներկայացնելով ոռոգման կարևորությունը Հայաստանում՝ գրող ու ճանապարհորդ Ատրպետը կապ է տեսնում հին և նոր ժամանակների Հայաստանի ջրաշինարարության միջև ու շեշտում, որ, եթե ներկայիս աշխատանքներն իրականացվեն նույն սկզբունքներով, ինչ հնում, ապա հայկական հողերը կվերակենդանան: Ատրպետն իդեալականացնում է հնագույն Հայաստանը (Նաիրի երկիրը, Վիշապների դարաշրջանը) և Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող գործընթացները ներկայացնում որպես հնի վերածնունդ[12]: Նա նույնիսկ զուգահեռներ է տեսնում տարածքի օգտագործման սկզբունքների մեջ. այսպես՝ ջրային պաշարներն իջեցվում են այն բարձր լեռներից, որտեղ, ինչպես հնում, այժմ էլ ջրի պաշտամունքի ուխտատեղեր կան (դրանց մոտ սովորաբար վիշապների արձաններ են դրվել). «Այս եռանդով ներկա դարի աշխատավորությունը կանգնած է այն շավղի վրա, ուր յոթանասուն դար առաջ, երկրամշակության բազմապիսի արտաբերություններով արբած ժողովուրդը Արագածի, Գառնիի, Մասիսի, Նեբրովթի, Վարագի և Կազանֆերի լանջերին ու կողերը, ջրանցքներ էր փորում, ջրին ճանապարհ էր բաց անում դեպի իր հանդերն ու ագարակները, ոռոգելու ցանքսերը և ծաղկեցնելու Նաիրի երկիրը: Կարծես թե լճակների մեջ

որի մասին Նանսենը գրում է, թե այն շուտով կհրատարակվի անգլերեն թարգմանությամբ. տե՛ս Ն ա ն ս ե ն. 2000, 189:

[11] Շ ի ր մ ա զ ա ն. 1961, 146:

[12] Ա տ ր պ ե տ. 1924, 44:

դարավոր քնից զարթնել են վիշապամայրերը, օձերից մտրակ շինած աշխատավորին մղում են դեպի այն բազմաթիվ լճակները, որտեղերից սկիզբն էին առնում մեր գետերն ու ջրանցքները, ցանկանում են վերանորոգել վիշապազանց դարը և անապատները դրախտի վերածել»[13]:

Հատկանշական է, որ այս նարատիվի հիմքում ընկած է ոռոգման միջոցով պետականության ստեղծման և ամրապնդման գաղափարը: Մասնավորապես, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության առանցքային գոտին՝ Արարատ և Արագած լեռների միջև ընկած Արարատյան դաշտն ու դրա ոռոգման խնդիրը դառնում են նոր պետականության կայացման կարևորագույն հարցը, ճիշտ այնպես, ինչպես հնագույն ժամանակներում էր և միջնադարում[14]: 1920 թ. հայկական պետականությունը Արագածի լանջերին վերստին վերականգնվեց: Հայ մտավորականները սկսեցին Արագածին մոտենալ թե՛ հոգևոր և թե՛ կիրառական տեսանկյուններից: Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ այժմ նրանց ուշադրության կենտրոնում էր Արագածի ջրային պաշարների կառավարման խնդիրները: Այս իմաստով պատահական չէ, որ 1920-ական թվականներին և 1930-ական թվականների սկզբներին սկսում են հետազոտվել Արագածի երկրաբանությունը, ջրային աղբյուրները, կառուցվում է օդերևութաբանական կայանը[15], ինչի հետ մեկտեղ իրականացվում են հնագիտական ուսումասիրություններ:

Ասվածը հիշեցնում է մեզ գերմանացի պատմաբան Կ. Ա. Վիթֆոգելի «իրիգացիոն» պետության հայտնի տեսությունը, ըստ որի՝ պետությունն առաջանում է ոռոգովի երկրագործության կազմակերպման արդյունքում, ինչը ենթադրում էր համայնական աշխատանք, ուժերի ընդհանրական համախմբում և վարչարարության առաջացում[16]: Եթե այս տեսությունը բացատրում է պետության առաջացման ընդհանուր դրդապատճառները, ապա 1920-ական թվականներին Հայաստանում ոռոգմանն ուղղված միջոցառումները բացահայտում են նման նախաձեռնությունների իրականացման մեխանիզմները: Ընդ որում, այդպիսի հզոր նախաձեռնությունների կարևոր բաղադրիչը պատմական նարատիվով հիմնավորված տնտեսական ծրագրերն էին[17]: Այն իր բնույթով արհեստական չէր, այլ, մասնակի պետական պատվերով համեմված լինելով հանդերձ, վերարտադրում էր պատմական իրականությունը:

Սոցռեալիզմը և ջուրը բացող հերոսի կերպարը

Լենինի խոսքերից բխող վերոհիշյալ նարատիվը, անշուշտ, ունենալով տնտեսական դրդապատճառներ, այնուամենայնիվ, ինչ-որ նախնական, արքետիպային կառուցվածքներ է հիշեցնում, որոնք կարող են մեզ վերադարձնել դեպի առասպելամտածողություն:

---

[13] Ա տ ր պ ե տ. 1924, 134–135, տե՛ս նաև՝ Ա տ ր պ ե տ. 1912, 3:

[14] Ա գ ա հ ա ն յ ա ն. 1957, 234.

[15] Լ ե վ ի ն ս օ ն-Լ ե ս ս ի ն գ. 1931; Թ ա մ ա ն յ ա ն. 1960, 16:

[16] W i t t f o g e l. 1957, 49–100.

[17] Խնդրին առնչվող տեսական հարցերի մասին տե՛ս Մ ո ւ ր ա դ յ ա ն. 2025, 14–23:

Արդեն սոցռեալիզմի հիմնադիր Մաքսիմ Գորկին խորհրդային գրողների առաջին համամիութենական համագումարի իր ելույթում, խոսելով մշակույթներում առասպելների ընդհանրության և իրականության առասպելականացման անհրաժեշտության մասին, նշում է. «Ֆոլկլորը մեր օրերում Վլադիմիր Լենինին բարձրացրեց հնության առասպելական հերոսին՝ Պրոմեթևսին հավասար բարձրության»[18]:

Եվ իրոք, արդեն Լենինի կենդանության օրոք, բայց հատկապես մահվանից անմիջապես հետո, նրա անվան շուրջ ձևավորվեցին բազմաթիվ ժողովրդական երգեր ու հեքիաթներ, որոնցում առաջնորդը խորհրդային մարդկանց համար հանդես է գալիս որպես մշակութային հերոս, դեմիուրգ, առաջին նախնի, ընտրյալ / մարգարե, հերոս-հսկա-դյուցազն, արդարության մարտիկ, հրաշագործ, փրկարար[19], բայց նաև՝ որպես ընդհանուր կանոններին չենթարկվող և աշխարհը կտրուկ վերափոխող / նոր աշխարհ ստեղծող տրիքստեր[20]:

Հայ ժողովուրդը ևս ստեղծել է լենինյան շարք, որը բաղկացած է ձոներգերից, հեքիաթներից, ավանդություններից և «Լենին փաշա» վիպերգից: Ժողովրդական բանասացները հյուսում են լենինյան հերոսապատումը և պատմական իրադարձությունների ֆոնի վրա ներկայացնում առաջնորդի կերպարը[21]: Դրանցում Լենինը գլխավոր հերոս է, որը սպանում է ցար-վիշապին, պարփակվում ժայռ-դամբարանում[22]: Ակնհայտ է, որ Լենինի այս կերպարը մի կողմից՝ պատվերով էր ստեղծված, բայց մյուս կողմից՝ կրում էր տարերայնորեն ձևավորված ժողովրդական ստեղծագործության կնիքը[23]:

Լենինի մասին այս պատկերացումները լիովին դիտարկելի են, այսպես կոչված, սոցռեալիզմի տեսանկյունից, որին բնորոշ էր խորհրդային իրականության առասպելականացումը[24]: Այստեղ ժողովրդական խոսույթի միջոցով այլընտրանքային իրականություն էր առաջարկվում, այնպիսի իրականություն, որը խորհրդային մարդուն ապագայի նկատմամբ հավատ էր ներշնչում: Ահա այստեղ է, որ ամեն հինը և ամեն կրոնականը մերժող խորհրդային իրականությունը, փաստորեն, ոչ թե ստեղծում էր նորը, այլ վերադառնում դեպի հինը, դեպի առասպելամտածողություն: Այս իմաստով խորհրդային պաշտոնական գաղափարախոսությունը ձեռք էր բերում վերին աստիճանի արխաիկ հատկանիշներ, իսկ խորհրդային հասարակությունը տիպաբանորեն նմանվում էր նախնադարյան համայնքին՝ իրեն բնորոշ հիերարխիկ կառուցվածքով, «կրո-

[18] Л у п п о л и др. 1934, 10.

[19] П я с к о в с к и й. 1930, 37, 40, 51, 57, 68, 86; С о л о в ь е в. 1930, 36, 55, 85, 92.

[20] A b r a h a m i a n. 1999. Խորհրդային առաջնորդների հերոսական կերպարի մասին տե՛ս А б р а м я н. 1990; J o s e p h s o n. 2024.

[21] Մ ե լ ի ք-Օ հ ա ն ջ ա ն յ ա ն. 1936, Մ ե լ ի ք յ ա ն. 1941, Մ ու ր ա դ յ ա ն. 1949, հմմտ. Ա ղ ա բ ա բ յ ա ն. 1963, 233:

[22] Պ ե տ ր ո ս յ ա ն. 1990, 48, Պ ե տ ր ո ս յ ա ն. 2014, 138–139, Պ ե տ ր ո ս յ ա ն. 2019, 97–98, Պ ե տ ր ո ս յ ա ն. 2023:

[23] Պ ե տ ր ո ս յ ա ն. 2019, 97–98:

[24] Հմմտ. С в я т о с л а в с к и й. 2015.

նական» համակարգով, նվիրաբերման ծեսերով և գաղտնի կազմակերպություններով, որի գլխավոր խորհրդանիշն ու հիմնադիր-նախնին դամբարանում միշտ ապրող հանգուցյալ առաջնորդն էր՝ Լենինը[25]: Այս ամենը ձևավորում էր Լենինի պաշտամունքը՝ արխաիկ հասարակությանը բնորոշ մեկ այլ կարևոր հատկանիշ[26]:

Լենինի այս բոլոր հատկանիշներին ավելանում է ևս մեկը՝ նա դառնում է ջուր բացող հերոս, վիշապամարտիկ[27]: Չէ՞ որ բազմաթիվ ժողովուրդների պատկերացումներում վիշապասպան հերոսը հենց ջուր բացող է, ոռոգում կազմակերպող, որի արդյունքում հին աշխարհը կործանվում է, և նոր աշխարհ է ստեղծվում[28]: Ընդ որում, Լենինը իր ծրագիրն ավանդում է նախ լեզվով՝ օգտագործելով բառեր, որոնք հնարամիտ կերպով ուղղորդում են մարդկանց և նրանց հավատ ներշնչում (ինչը տրիքստերին բնորոշ կարևոր հատկանիշ է[29]):

Ուշագրավ է, որ վիշապամարտության մասին հիշատակում է նաև Նանսենը: Կովկասում վերջինիս ուղեկցող ռուս գրող Ալեքսանդր Կուպրինը հիշում է, որ մի առիթով Նանսենը խոսում է այն մասին, որ կենարար ջուրը և դրա հսկողությունը տարբեր ժողովուրդների հեքիաթներում կապվում են վիշապի և նրան հաղթող ու ջուրը բացող հերոսի հետ: Մեկնելով Նանսենին՝ Կուպրինը նշում է, որ Կովկասի բոլոր ժողովուրդները պաշտում են Սբ. Գևորգ վիշապամարտիկին, որի շղարշի տակ թաքնված է հարսնացուին վիշապի իշխանությունից ազատագրող հնագույն հերոսը: Գյուղացիները մինչ օրս պահպանել են հիշողությունը Վիշապի / Գվելեշապիի մասին, որը գետերի և ջրերի տիրակալն էր ու ջուր էր բաշխում միայն աղջիկների զոհաբերության դիմաց: Ապա գրողը դիպուկ ավելացնում է. «Մեր խորհրդային իրականությունը, ոչնչացնելով հին լեգենդները, ստեղծում է նորերը: Ժողովուրդն արդեն հեքիաթներ է գրում այն մասին, թե ինչպես սոցիալիզմի մեծ երկրում բնակվող բոլոր ցեղերի տասնյակ հազարավոր նորաթուխ ասպետներ, ոչ թե արևոտ շղթայական զրահներով և ոչ թե նիզակներով, այլ բարդ ու հզոր մեխանիզմներով, համատեղ հասցնում են վերջնական հարվածները անգիտության վիշապին: Հզոր էլեկտրակայաններ կառուցելով արագահոս գետերի վրա, հարյուր կիլոմետրանոց ոռոգման ջրանցքներ անցկացնելով, նավագնացություն հաստատելով՝ նրանք արթնացնում են հարուստ երկիրը դարավոր քնից»[30]:

Եվ այս ամենի հիմքում ընկած է Լենինի անունը, ով տվյալ պարագայում հանդես է գալիս որպես կովկասյան ժողովուրդների, այդ թվում՝ հայերի փրկիչ, նրանց վերածննդի և կայուն զարգացման խորհրդանիշ, որպես ջուր ու

---

[25] Абрамян. 1993, 36–38; Պետրոսյան. 2019, 97–98:

[26] Այս մասին մանրամասն տե՛ս Tumarkin. 1983.

[27] Պետրոսյան. 1990, 49, Abrahamian. 1999, 14.

[28] Lyle. 2025; հմմտ. Աբրահամյան. 2019, Հայրապետյան. 2019, Դալալյան. 2024:

[29] Abrahamian. 1999, 19.

[30] Вержбицкий. 1978, 248; Վիշապի պատմության համար հմմտ. նաև Նանսեն. 2000, 54:

ջրի (հիդրոէլեկտրակայանների) միջոցով լույս (կոնկրետ իմաստով՝ էլեկտրականություն, իսկ փոխաբերական՝ լուսավորություն) բերող հերոս[31]: Այս տեսանկյունից պատահական չէ, որ Խորհրդային Հայաստանի առաջին խոշոր ծրագիրը դարձած Շիրակի ջրանցքն անվանվում է Լենինի անունով: 1925 թ. հունիսի 21-ին ջրանցքի համաժողովրդական բազմամարդ բացումից հետո, որին մասնակցում է Նանսենը՝ ունենալով տպավորիչ ելույթ, այն դառնում է Խորհրդային Հայաստանի կարևոր խորհրդանիշներից մեկը և վերածվում քարոզչության գործիքի: Ջրանցքի մասին ստեղծվում են ժողովրդական պատումներ, գրողներն ու բանաստեղծները գովերգում են այն իրենց ստեղծագործություններում[32]: Նույնը տեղի է ունենում Վրաստանում 1927 թ.՝ Կուր գետի վրա բացված Ձեմո-Ավչալյան հիդրոէլեկտրակայանի գործարկման կապակցությամբ, որի առջև դրվում է Լենինի արձանը, իսկ առաջնորդը ներկայացվում է որպես բնական տարերքը՝ ջուրը, հաղթահարող հերոս[33]: Այստեղ ևս պետական հզոր նախաձեռնությունն ուղեկցվում է պատվիրված նարատիվով, որն արդարացնում է այն բոլոր զոհաբերությունները, որոնք պահանջում են մեծ գործերը:

Եզրակացություն

Վ. Լենինի 1921 թ. նամակում ձևակերպված ոռոգման առաջնահերթության դրույթը դարձավ անդրկովկասյան հանրապետությունների տնտեսական ու գաղափարական ծրագրերի առանցքը: Նանսենի մարդասիրական առաքելությունը Հայաստան, երկրի ոռոգման հնարավորությունների ուսումնասիրությունը ոչ պատահականորեն համընկան այս ծրագրերի ծաղկման փուլին՝ դրան տալով միջազգային հնչեղություն:

1920-ական թվականների ջրաշինարարական լայնածավալ նախաձեռնությունները, ի թիվս այլոց, ուղեկցվեցին հնագիտական ուսումնասիրություններով, որոնց նպատակն էր ձևավորել մի նարատիվ, ըստ որի՝ ոռոգումը հնագույն ժամանակներից կարևոր դեր է խաղացել պետականության ստեղծման և զարգացման գործում: Ոռոգման հնագույն համակարգերի և դրանց ակունքներում գտնվող «վիշապ» կոթողների հետազոտությունն այս ընկալման գիտական հիմնավորման կարևոր բաղադրիչը դարձավ:

Սոցիալիստական ռեալիզմի գաղափարախոսության շրջանակներում Լենինի կերպարը առասպելականացվեց. առաջնորդը վերածվեց, ի թիվս այլոց, նաև «ջուր բացող հերոսի»:

Այս ամենի արդյունքում ոռոգման ծրագրերը ներկայացվեցին ոչ միայն որպես տնտեսական անհրաժեշտություն, այլև որպես նոր պետականության հաստատման խորհրդանիշ: Լենինի անվամբ ջրանցքների կառուցումն ու

[31] Հմմտ. С а р к и с о в. 1950; Е г и а з а р о в. 1970, 12–21; Б е г и я н. 1970.

[32] Ն ա ն ս ե ն. 2000, 134–142, հմմտ. Ա տ ր պ ե տ. 1924, Շ ի ր մ ա զ ա ն. 1960, Շ ի ր մ ա զ ա ն. 1962, 61–74, M a l k h a s y a n. 1970; Գ ա լ ս տ յ ա ն. 2024:

[33] Բ ա գ ո յ ա ն. 2019, 267–268:

դրանց գաղափարական ենթատեքստը վկայում են, որ խորհրդային քարոզչությունը ներկան և ապագան կերտելիս օգտագործում էր վաղուց հայտնի գործիքակազմեր:

Անի Պետրոսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հնագիտության պատմություն, հնագիտության և քաղաքականության առնչություններ, գիտական նարատիվների ձևավորման պատմություն: Հեղինակ է 5 հոդվածի:
ORCID: 0009-0003-5699-1253. petrosyanani33@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1941, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան, «Արմֆան», 98 էջ [Abeghyan M. 1941, The Monuments Called "Dragons" as Statues of the Goddess Astghik-Derketo. Yerevan, "Armfan", 98 p. (in Armenian)]:

Աբրահամյան Լ. 2019, Վիշապը աղբյուրի ակին. – Բոբոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 119–130 [Abrahamyan L. 2019, The Dragon at the Source. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 119–130 (in Armenian)]:

Աղաբաբյան Ս. 1963, Ակսել Բակունց, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 502 էջ [Aghababyan S. 1963, Aksel Bakunts. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 502 p. (in Armenian)]:

Աղախանյան Գ. Ա. 1960, Ջրային տնտեսության զարգացումը Հայաստանում, Երևան, «Հայպետհրատ», 151 էջ [Aghakhanyan G. A. 1960, The Development of Water Economy in Armenia. Yerevan, "Haypethrat", 151 p. (in Armenian)]:

Առաքելյան Հ. Մ. 1987, Սիսիան (Տեղեկատու-ուղեցույց), Երևան, ՀԿԿ Կենտկոմի հրատ., 131 էջ [Arakelyan H. M. 1987, Sisian (Information Guide). Yerevan, Publishing House of the Central Committee of the Communist Party of Armenia, 131 p. (in Armenian)]:

Ատրպետ. 1912, Վիշապամայր. պատմվածք, Ալէքսանդրապոլ, «Շիրակ», 48 էջ [Atrpet. 1912, Dragon Mother: Story. Alexandrapol, "Shirak", 48 p. (in Armenian)]:

Ատրպետ. 1924, Շիրակի ջրանցքը. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), էջ, 31–46, 131–142 [Atrpet. 1924, Shirak Canal. – "Handes Amsoreay" (Vienna), p. 31–46, 131–142 (in Armenian)].

Արզումանյան Մ. 1974, Նանսենի միսիան Հայաստանում. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 42–65 [Arzumanyan M. 1974, Nansen's Mission in Armenia. – "Bulletin of Yerevan University", № 3, p. 42–65 (in Armenian)]:

Արզումանյան Մ. Վ. 1977, Նանսենը և Հայաստանը, Երևան, «Հայաստան», 341 էջ [Arzumanyan M. V. 1977, Nansen and Armenia. Yerevan, "Hayastan", 341 p. (in Armenian)]:

Բագոյան Ա. 2019, Վիշապի մոտիվը հայ նոր գրականության մեջ. – Բոբոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 257–272 [Bagoyan A. 2019, The Dragon Motif in New Armenian Literature. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 257–272 (in Armenian)]:

Գալստյան Հ. 2024, Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ. – Բոբոխյան Ա., Հովսեփյան Ռ. (խմբ.), Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, ԱԻԿԱ-Արմենիա, էջ 243–253 [Galstyan H. 2024, The Significance of the Construction of the Shirak Canal and its Reflection in Folklore. – Bobokhyan A., Hovsepyan R. (ed.), The Culture of Water Use in Armenia from Ancient Times to the Present Day. Yerevan, AICA-Armenia, p. 243–253 (in Armenian)]:

Գասպարյան Ա. 1968, «Նորք» հանդես. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 183–192 [Gasparyan A. 1968, "Nork" Journal. – "Bulletin of the Archives of Armenia", № 1, p. 183–192 (in Armenian)]:

Դալալյան Ա. 2024, Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը. – Բոբոխյան Ա., Հովսեփյան Ռ. (խմբ.), Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, ԱԻԿԱ-Արմենիա, էջ 99–105 [Dalalyan A. 2024, The Mythological Dragon and the Emergence of Irrigation Systems. – Bobokhyan A., Hovsepyan R. (ed.), The Culture of Water Use in Armenia from Ancient Times to the Present Day. Yerevan, AICA-Armenia, p. 99–105 (in Armenian)]:

Թամանյան Ա. 1960, Հոդվածներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 284 էջ [Tamanyan A. 1960, Documents, Contemporaries About Him. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, 284 p. (in Armenian)]:

Թամանյան Յու. 1988, Հուշարձաններին նոր կյանք, Երևան, «Հայաստան», 208 էջ [Tamanyan Yu. 1988, New Life for Monuments. Yerevan, "Hayastan", 208 p. (in Armenian)]:

Խաչատրյան Մ. Մ. 1971, Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը. – ՊԲՀ, № 3, էջ 128–137 [Khachatryan M. M. 1971, The Engraved Drawing of the Pre-Urartian Water Distribution System of Aragatsotn. – HPhJ, № 3, p. 128–137 (in Armenian)]:

Հայրապետյան Թ. 2019, Վիշապը հայկական հրաշապատում հեքիաթներում. – Բոբոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 108–118 [Hayrapetyan T. 2019, The Dragon in Armenian Fairy Tales. – Bobokhyan A., Gilibert A., Hnila P. (ed.), The Dragon on the Border of Fairy Tale and Reality. Yerevan, Institute of Archaeology and Ethnography Press, p. 108–118 (in Armenian)]:

Մելիքյան Հ. 1941, Լենինը և Ստալինը հայկական ֆոլկլորում, Երևան, «Հայպետհրատ», 76 էջ [Melikyan H. 1941, Lenin and Stalin in Armenian Folklore. Yerevan, "Haypethrat", 76 p. (in Armenian)]:

Մելիք-Օհանջանյան Կ. 1936, Լենինը հայ ֆոլկլորի մեջ, Երևան, «Հայպետհրատ» 176 էջ [Melik-Ohanjanyan K. 1936, Lenin in Armenian Folklore. Yerevan, "Haypethrat", 176 p. (in Armenian)]:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1

Մուրադյան Մ. 1949, Լենինի և Ստալինի կերպարները սովետական հայկական երաժշտական ստեղծագործություններում. – «Տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, № 10, էջ 111–128 [Muradyan M. 1949, The Characters of Lenin and Stalin in the Soviet Armenian Musical Works. – "Bulletin of Social Sciences". Yerevan, № 10, p. 111–128 (in Armenian)]:

Մուրադյան Հ. 2025, Մշակութային քաղաքականությունը խորհրդային և հետխորհրդային Հայաստանում, Երևան, «Անտենոր», 207 էջ [Muradyan H. 2025, Cultural Policy in the Soviet and Post-Soviet Armenia. Yerevan, "Antenor", 207 p. (in Armenian)]:

Նանսեն Ֆ. 2000, Խաբված ժողովուրդ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 288 էջ [Nansen F. 2000, Deceived People. Yerevan, Yerevan University Press, 288 p. (in Armenian)]:

Շիրմազան Գ. 1960, Շիրակի Լենինի անվան ջրանցքը. – ՊԲՀ, № 4, էջ 92–103 [Shirmazan G. 1960, The Lenin Canal in Shirak. – HPhJ, № 4, p. 92–103 (in Armenian)]:

Շիրմազան Գ. 1961, Այղրը լճի ջրհան կայանի շինարարության այցելուների տպավորությունների մատյանը. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 143–155 [Shirmazan G. 1961, The Log of Impressions of Visitors to the Construction of the Aighir Lake Pumping Station. – "Bulletin of the Archives of Armenia", № 1, p. 143–155 (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ. 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, Հայպետգյուղհրատ, 176 էջ [Shirmazan G. V. 1962, Episodes from the History of Irrigation in Armenia. Yerevan, Haypetgyughrat, 176 p. (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ. 1963, Ֆրիտյոֆ Նանսենը Հայաստանում. – ՊԲՀ, № 1, էջ 195–210 [Shirmazan G. V. 1963, Fridtjof Nansen in Armenia. – HPhJ, № 1, p. 195–210 (in Armenian)]:

Շիրմազան Գ. Վ., Դարբինյան Ա. Ա. 1961, Ջրատնտեսական աշխատանքները Սովետական Հայաստանում (1920–1940 թթ.). – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 49–56 [Shirmazan G.V., Darbinyan A. A. 1961, Waterworks in the Soviet Armenia (1920–1940). – "Bulletin of the Archives of Armenia", № 1, p. 49–56 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 1990, Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցության մեջ. – Հանրապետական գիտական նստաշրջան՝ 1986–1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., էջ 47–50 [Petrosyan A. 1990, Reflection of a Mythological Scheme in Public Consciousness. – Republican Scientific Session: 1986–1988. Main Results of Ethnographic and Folcloristic Field Research, Theses of Reports. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press, p. 47–50 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2014, Հայոց պատմությունը և վիպական բանահյուսությունը. – «Բանբեր Մատենադարանի», № 21, էջ 131–142 [Petrosyan A. 2014, Armenian History and Epic Folklore. – "Bulletin of the Matenadaran", № 21, p. 131–142 (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2019, Առասպել և ժամանակակից իրականություն, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 215 էջ [Petrosyan A. 2019, Myth and Modern Reality. Yerevan, Press of the Institute of Archaeology and Ethnography, 215 p. (in Armenian)]:

Պետրոսյան Ա. 2023, Խորհրդային լենին-ստալինյան «էպոսը» հայ վիպական բանահյուսության համատեքստում. – Անտոնյան Յ. (խմբ.), Խորհրդահայ մշակույթը. կոնցեպտը, ընկալումներն ու դրսևորումները, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 233–250 [Petrosyan A. 2023, The Soviet Leninist-Stalinist "Epic" in the Context of Armenian Epic Folklore. – Antonyan Y. (ed.), Soviet Armenian Culture: Concept, Perceptions and Manifestations. Yerevan, YSU Press, p. 233–250 (in Armenian)]:

Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.). 2015, Վիշապ քարակոթողները, Երևան, «Գիտություն», էջ 13-52 [Petrosyan A., Bobokhyan A. (ed.). 2015, Dragon Stone Stelae. Yerevan, "Gitutyun", p. 13-52 (in Armenian)]:

Տեր-Մովսիսյան Մ. 1936, Պատմական տեղեկութիւններ Հայաստանի հողերի ոռոգման մասին, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 142 էջ [Ter-Movsisyan M. 1936, Historical Information on the Irrigation of Armenian Lands. Jerusalem, Srbots Hakobyans Press, 142 p. (in Armenian)]:

Քալանթար Ա. 1925, Քարե դարը Հայաստանում. – «Նորք» (Երևան), № 5/6, էջ 207–232 [Kalantar A. 1925, The Stone Age in Armenia. – "Nork" (Yerevan), № 5/6, p. 207–232 (in Armenian)]:

Քալանթար Ա. 1931, Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, Երևան, Պետհրատ, 15 էջ [Kalantar A. 1931, Committee for the Preservation of Antiquities of Armenia. Yerevan, Pethrat, 15 p. (in Armenian)]:

Քալանթար Ա. 1937, Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում. – «Տեղեկագիր Հայկական ԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի» (Երևան), № 2, էջ 171–194 [Kalantar A. 1937, An Ancient Water Distribution System in the Soviet Armenia. – "Bulletin of the Institute of History and Literature of the Armenian SSR" (Yerevan), № 2, p. 171–194 (in Armenian)]:

Абрамян Л. 1990, Перестройка как карнавал. – «Век XX и мир» (Москва), № 6, с. 45–48 [Abrahamyan L. 1990. Perestroika as a Carnival. – "The 20th Century and the World" (Moscow), № 6, p. 45–48 (in Russian)].

Абрамян Л. А. 1993, Тайная полиция как тайное общество: страх и вера в СССР. – «Этнографическое обозрение» (Москва), № 5, с. 35–42 [Abrahamyan L. A. 1993, The Secret Police as a Secret Society: Fear and Faith in the USSR. – "Ethnographic Review" (Moscow), № 5, p. 35–42 (in Russian)].

Агаханян Г. А. 1957, Развитие орошения в Советской Армении. – «Труды армянского научно-исследовательского Института гидротехники и мелиорации» (Ереван), «Айастан», № 2, с. 233–252 [Aghakhanyan G. A. 1957, The Development of Irrigation in the Soviet Armenia. – "Transactions of the Armenian Research Institute of Hydraulic Engineering and Land Reclamation" (Yerevan), "Hayastan", № 2, p. 233–252 (in Russian)].

Арутюнян В. М., Оганесян К. А. 1955, Архитектура Советской Армении. Ереван, Академия наук Армянской ССР, 290 с. [Harutyunyan V. M., Oganesyan K. A. 1955, Architecture of the Soviet Armenia. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 290 p. (in Russian)].

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1

Бегиян А. З. 1970, Ленин и становление советской национальной государственности в Закавказье. – «Вестник общественных наук» (Ереван), № 4, с. 78–86 [Begiyan A. Z. 1970, Lenin and the Formation of Soviet National Statehood in Transcaucasia. – "Herald of Social Sciences" (Yerevan), № 4, p. 78–86 (in Russian)].

Вержбицкий Н. 1961, Записки старого журналиста. Москва, Советский писатель, 248 с. [Verzhbitsky N. 1961, Notes of an Old Journalist. Moscow, Sovetsky Pisatel, 248 p. (in Russian)].

Вержбицкий Н. К. 1978, Встречи. Москва, «Советская Россия», 256 с. [Verzhbitsky N. K. 1978, Meetings. Moscow, "Sovetskaya Rossia", 256 p. (in Russian)].

Егиазаров И. В. 1970, Ленин, электрификация и плановое хозяйство. – «Вестник общественных наук» (Ереван), № 9, с. 12–21 [Egiazarov I. V. 1970, Lenin, Electrification and the Planned Economy. – "Herald of Social Sciences" (Yerevan), № 9, p. 12–21].

Капанцян Г. 1952, О каменных стелах на горах Армении. Ереван, Академия наук Армянской ССР, 51 с. [Kapantsyan G. 1952, Towards the Stone Stelae on the Mountains of Armenia. Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 51 p. (in Russian)].

Киквидзе Я. И. 1964, Орошение в древней Грузии (историко-археологический очерк). – Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. Тбилиси, Тбилисский государственный университет, 33 с. [Kikvidze Ya. I. 1964, Irrigation in Ancient Georgia (Historical and Archaeological Essay). – Abstract of a Dissertation for the Degree of Candidate of Historical Sciences. Tbilisi, Tbilisi State University, 33 p. (in Russian)].

Левинсон-Лессинг Ф. Ю. (ред.). 1931, Алагез: потухший вулкан Армянского нагорья. Ленинград, Академия наук СССР, 397 с. [Levinson-Lessing F. Yu. (ed.). 1931, Alagez: An Extinct Volcano of the Armenian Highlands. Leningrad, USSR Academy of Sciences, 397 p. (in Russian)].

Ленин В. И. 1950, Товарищам-коммунистам Азербайджана, Грузии, Армении, Дагестана, Горской Республики. – Сочинения, т. 32, Издание четвертое. Москва, Госиздательство политической литературы, с. 295–297 [Lenin V. I. 1950, To Comrade Communists of Azerbaijan, Georgia, Armenia, Dagestan, and the Mountainous Republic. – Collection of Works, V. 32, Fourth Edition. Moscow, State Press of Political Literature, p. 295–297 (in Russian)].

Луппол И. К., Розенталь М. М., Третьяков С. М. (ред.). 1934, Первый Всесоюзный съезд советских писателей: стенографический отчет. Москва, Художественная литература, 718 с. [Luppol I. K., Rozental M. M., Tretyakov S. M. (ed.). 1934, First All-Union Congress of Soviet Writers: Verbatim Report. Moscow, Khudozhestvennaya literatura, 718 p. (in Russian)].

Марр Н. Я., Смирнов Я. И. 1931, Вишапы. Ленинград, Огиз, 133 с. [Marr N. Ya., Smirnov Ya. I. 1931, Vishaps. Leningrad, Ogiz, 133 p. (in Russian)].

Пиотровский Б. Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении. Ленинград, АН СССР, 40 с. [Piotrovsky B. B. 1939, Vishaps: Stone Statues in the Mountains of Armenia. Leningrad, USSR Academy of Sciences, 40 p. (in Russian)].

Пиотровский Б. Б. 1949, Археология Закавказья. Ленинград, Государственный университет имени А. А. Жданова, 134 с. [Piotrovsky B. B. 1949, Archaeology of Transcaucasia. Leningrad, State University after A. A. Zhdanov, 134 p. (in Russian)].

Пясковский А. В. 1930, Ленин в русской сказке и восточной легенде. Москва, Молодая гвардия, 95 с. [Pyaskovsky A. V. 1930, Lenin in Russian Tale and Eastern Legend. Moscow, Molodaya Gvardiya, 95 p. (in Russian)].

Саркисов Е. Г. 1950, Ленин и народы Закавказья. – «Известия Академии наук Армянской ССР. Общественные науки» (Ереван), № 5, с. 3–19 [Sarkisov E. G. 1950, Lenin and the Peoples of Transcaucasia. – "Bulletin of the Academy of Sciences of the Armenian SSR. Social Sciences" (Yerevan), № 5, p. 3–19 (in Russian)].

Святославский А. В. 2015, Социалистический реализм: проблемы веры и интерпретации. – «Культурологический журнал» (Москва), № 2, с. 1–10 [Svyatoslavsky A. V. 2015, Socialist Realism: Problems of Faith and Interpretation. – "Cultural Studies Journal" (Moscow), № 2, p. 1–10 (in Russian)].

Соловьев Л. В. 1930, Ленин и творчество народов Востока. Москва, Московский рабочий, 125 с. [Soloviev L. V. 1930, Lenin and the Creativity of the Peoples of the East. Moscow, Moskovsky Rabochy, 125 p. (in Russian)].

Хачатрян М. М. 1976, О древней ирригационной сети Арагацотн. – «Вестник Ереванского университета» (Ереван), № 1, с. 121–129 [Khachatryan M. M. 1976, On the Ancient Irrigation Network of Aragatsotn. – "Bulletin of Yerevan University" (Yerevan), № 1, p. 121–129 (in Russian)].

Abrahamian L. 1999, Lenin as a Trickster. – "Anthropology & Archeology of Eurasia" (New York), № 38/2, p. 7–26.

Bobokhyan A., Iraeta-Orbegozo M., McColl H., Mkrtchyan R., Simonyan H., Ramos-Madrigal J., Andrades-Valtueña A., Hnila P., Gilibert A., Margaryan A. 2024, Burial of Two Closely Related Infants under a "Dragon Stone" from Prehistoric Armenia. – "Journal of Archaeological Science: Reports" (Amsterdam), № 57, p. 1–15.

Brentjes B. 1973, Drei Jahrtausende Armenien. Leipzig, Koehler und Amelang, 239 S.

Burney Ch., Lang D. M. 1971, The Peoples of the Hills. London, Weidenfeld and Nicolson, p. 324.

Gilibert A., Bobokhyan A., Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains. – "Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft" (Berlin), № 144, p. 93–132.

Hnila P., Gilibert A., Bobokhyan A. 2019, Prehistoric Sacred Landscapes in the High Mountains: The Case of the Vishap Stelae between Taurus and Kaukasus. – Engels B., Huy S., Steitler Ch. (Hrsg.), Natur und Kult in Anatolien, BYZAS 24: Veröffentlichungen des Deutschen Archäologischen Instituts. Istanbul, S. 283–302.

Josephson P. R. 2024, Hero Projects: The Russian Empire and Big Technology from Lenin to Putin. Oxford, Oxford University Press, p. 344.

Kushnareva K. K. 1997, The Southern Caucasus in Prehistory. Philadelphia, Pennsylvania Museum, p. 279.

Lyle E. 2025, The Hero who Releases the Waters and Defeats the Flood Dragon. – "Comparative Mythology" (Baltimore), № 1/1, p. 1–12.

Malkhasyan R. S. 1970, V. I. Lenin Shirak Irrigation and Waterpower Canal – A Pioneering Multi-Purpose Water Resources Utilization Project. – "Hydrotechnical Construction" (New York), № 4, p. 334–338.

Nalbandyan M. 2016, Ancient Aqueducts and the Irrigation System in Armenia. – Angelakis A. N., Chioti E., Eslamian S., Weingartner H. (ed.), Anderground Aqueducts Handbook. London-New York, CRC Press, p. 305–321.

Santrot J. (ed.) 1996, Arménie: Trésors de l'Arménie ancienne des origines au IVe siècle. Paris, Musée Dobrée, p. 287.

Tumarkin N. 1983, Lenin Lives! The Lenin Cult in Soviet Russia. Cambridge MA, Harward University Press, p. 352.

Wittfogel K. A. 1957, Oriental Despotism: A Comparative Study of Total Power. New Haven-London, Yale University Press, p. 556.

ФОРМИРОВАНИЕ ИСТОРИЧЕСКОГО НАРРАТИВА ОБ ИРРИГАЦИИ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

АНИ ПЕТРОСЯН

Резюме

Ключевые слова: В. Ленин, Ф. Нансен, ирригация, стелы «вишап», советская идеология, социалистический реализм, археологические исследования.

В 1921 году в письме Председателя Совета народных комиссаров РСФСР Владимира Ленина к коммунистам Кавказа была сформулирована идея о важности ирригации, ставшей ключевой отправной точкой социально-экономического развития региона. Гуманитарная миссия норвежского полярного исследователя и общественного деятеля Фритьофа Нансена в Армении, напрямую связанная с ирригационными проектами, обосновывала актуальность идей Ленина на международном уровне. В тот же период активизировались археологические исследования по древним ирригационным системам и имеющим к ним отношение памятникам «вишап», в результате которых сформировался научный дискурс о том, что в древности ирригацией было обусловлено возникновение государственности.

В рамках социалистического реализма образ Ленина мифологизировался, приобретая черты «героя, открывающего воду», что служило пропагандистским целям. Таким образом, ирригационные проекты представляются не только как экономическая необходимость, но и как символ новой советской и, в частности, армянской советской государственности.

Ани Петросян – научный сотрудник Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: история армянской археологии, взаимосвязь археологии и политики, история формирования научных нарративов. Автор 5 статей. ORCID: 0009-0003-5699-1253. petosyanani33@gmail.com

FORMATION OF THE HISTORICAL NARRATIVE ON IRRIGATION IN THE SOVIET ARMENIA

ANI PETROSYAN

Summary

Keywords: V. Lenin, F. Nansen, irrigation, "vishap" stelae, soviet ideology, socialist realism, archaeological investigations.

In the letter of 1921, addressed to the communists of the Caucasus, the Chairman of the Council of People's Commissars of the RSFSR, Vladimir Lenin formulated an idea of importance of irrigation, which became a key starting point for the social and economic development of the region. The humanitarian mission of the Norwegian polar explorer and public figure Fridtjof Nansen in Armenia, directly related to irrigation projects, proved the relevance of Lenin's ideas at the international level. During the same period, archaeological research on ancient irrigation systems and related monuments called "vishap" were intensified resulting in a scientific discourse according to which irrigation in ancient times conditioned the emergence of statehood. Within the framework of socialist realism, the image of Lenin was mythologized acquiring the features of a "hero who discovers water", which served propaganda purposes. Thus, irrigation projects are presented not only as an economic necessity, but also as a symbol of the new Soviet and, in particular, Soviet Armenian statehood.

Ani Petrosyan – Researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: history of Armenian archaeology, interrelation between archaeology and politics, formation of scientific narratives. Author of 5 articles. ORCID: 0009-0003-5699-1253. petosyanani33@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 1